

բակցութեամբ Տ. Շաւարշ Վրդի., ներկայ գըտ-  
նուեցաւ Ֆրանչիսկեանց եկեղեցւոյն մէջ կա-  
տարուած պաշտամունքին՝ ի հանդիստ հոգւոյ  
լեհաստանի հանգուցեալ նախագահին:

● Կիր. 19 Մայիս. — Ս. պատարագը մատու-  
ցուեցաւ ի Ս. Փրկիչ և յատուկ հոգեհանգստեան  
պաշտոն կատարուեցաւ հանդուցեալ Տ. Մատ-  
թէոս Եպ. Գայրգնեանի մահուան քառասորե-  
քին առթիւ: Տ. Մկրտիչ Սրբազան քարոզից,  
օրուան ընթերցուածէն պատշանեցումներ ընե-  
լով հանդուցեալ սրբազանին կեանքին եւ գոր-  
ծունէութեան վերաբերմամբ: Ապա հանդուց-  
եալին հողակոյտին վրայ կատարուեցաւ պաշ-  
տոն յիշատակի:

● Գշ. 21 Մայիս. — Հանրածանօթ յանձնա-  
ռու Տ. Տէֆարբո, Գահիրէէն, այցելեց Ս. Պատ-  
րիարք Հօր. օտ կառոյց Գահիրէի մեր Ս. Լուսա-  
ւորիչ հոյակապ եկեղեցին. իսկ այժմ հաս երու-  
սաղէմի մէջ կառոյց նոյնպէս պետական նոր  
մեծ թանգարանը:

● Գշ. 22 Մայիս. — Հարբուրթի համալսարա-

նին բրոֆէսէօրներէն Մր. Լէք եւ իր տիկինը  
այցելեցին Ս. Պատրիարք Հօր:

● Եր. 25 Մայիս. — Երեկոյիս, ժառանգաւո-  
րացի մէջ բանխօսեց Պ. Շահան Պէրպէրեան.  
Նիւթն էր կրօնքն ու արուեստը:

● Կիր. 26 Մայիս. — Երեւման խաչի առթիւ  
Մայր Տաճարին մէջ քարոզեց Տ. Տիրան Վրդ.  
Կողոստացոց թղթին (Ա. 20) սախօսքին վրայ. —  
«Ընդլու հաշտեցուցանել զամենայն ի նոյն, ա-  
բար խաղալութիւն արեամբ խաչին իւրոյ, որ  
ինչ յերկրի և որ ինչ յերկինս»: բացատրեց թէ  
խաչին իմաստը Աստուծոյ՝ մարդոց հետ հաշ-  
տութեան այրիքն մեղաց շնչումին խորհուրդն  
է. խաչը նոր ծիածանն է, որ երկիրը երկինքին  
հետ կը միացնէ: Անիկա, անգամ մը Քրիստոսի  
ծնօքով մինչև երկինք բարձրացած արդէն, մենէ  
իւրաքանչիւրին միջոցաւ եւս բարձրացուած  
կ'ըլլայ, որքան աւելի բարձր և աստուածային  
նպատակներու համար կրենք տառապանքը, զոր  
ան կը խորրդանշէ:

**Հ Ա Ն Գ Ի Ս Տ**  
**Տ. ՎԱՍԻԼԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՂՊՏՈՑ**

Ընդհանուր կերպով ցաւազին տպաւորութիւն գործեց Ս. Քաղաքիս Ղպտի հասարակութեան հո-  
գևոր գըտնիին մահը, որ տեղի ունեցաւ, յետ կարճատե հիւանդութեան, Մայիս ամսոյ 13ին, Բշ. օր:  
Տ. Վասիլիոս Սրբազան, իբր 55 տարեկան, որ աւելի քան տասը տարինեղէ ի վեր կը վարէր այդ  
պաշտօնը, ոչ միայն իր հօտէն այլ նաև ամենքէն սիրուած լուրջ Հովիւ մըն էր: Բնիկ եգիպտացի,  
երկար տարինեղէ ի վեր երուսաղէմ էր, նախապէս իբրև օգնական իր նախորդին՝ յաջորդած էր ա-  
նոր իր ծանուցեալ արժանեօք: Իր յարաբերութիւնները մասնաւորապէս մեր Պատրիարքարանին  
հետ՝ եղած էին ջերմ և յարգալից: Ս. Պատրիարք Հայրը, գնահատելով անոր բարի նկարագիրը,  
նորոճ էր եպիսկոպոսական լանջախաչ մը: Յուղարկութիւնը կատարուեցաւ յաջորդ օրը, իր  
աստիճանին պատշաճ շուքով. պատրիարքարաններու, կառավարութեան և հիւպատոսներու ներ-  
կայացուցիչներու մասնակցութեամբ: Նոյն օրը Գահիրէէն յատուկ կառախուժումով եկած էր զպտի  
եպիսկոպոս մը, որ նախագահեց: Ս. Պատրիարք Հօր կողմէ ներկայ էին Լուսարարապետ Տ. Մեսրոպ  
Սրբազան, ընկերակցութեամբ Տ. Վահան, Խորէն, Հայրիկ Վարդապետներու և Տ. Յուսիկ արքայախ:  
որոնք հայ ծէսով յատուկ պաշտամունք մը կատարեցին հանգուցեալին զազաղին շուրջը: Մարմինը  
վախճարուեցաւ Յոպղէ, ուր թաղուեցաւ իրենց վանքի բակին մէջ, առնթիւր գերեզմանի նոյն  
վանքի հիմնաքար նախկին եպիսկոպոսին: Միւս հողերոր ներկայացուցիչներուն հետ, Տ. Հայրիկ Վրդ.  
ևս գնաց Յոպղէ մեր կողմէ, և ներկայ եղաւ թաղման: Ս. Պատրիարքը ցաւակցական հեռագիր  
մ'ուղղեց Գահիրէ, Ն. Ա. Տ. Յովհաննէս Պատրիարքին, որ անմիջապէս պատասխանեց ջերմ նոր-  
հակաւորութեամբ:

Երկնային հանգի՛տ հոգւոյ բարեկրօն հանդուցելոյն: